ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ (1920—1933)

ՆՈՐԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ցարիզմի գաղութային քաղաքականության և դաշնակցականների տխրահռչակ տիրապետության հետևանքով Սովետական Հայաստանն անցյալից ժառանգություն ստացավ հետամնաց և քայքայված տնտեսություն։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Հայաստանի կոմունիստական կուսակցության առջև ծառացավ հանրապետությունում սոցիալիզմի կառուցման դժվարագույն խնդիրը։ Գյուղում սոցիալիզմի կառուցման առաջնահերթ խնդիրներն էին աղքատության, տնտեսական հետամնացության վերացումը, գյուղատնտեսությունը զարգացման սոցիալիստական ուղի փոխադրելը, շահագործող վերջին դասակարգին՝ կուլակությանը, վերացնելը, կուլտուրական շինարարության ծավալումը և սոցիալիզմի ոգով աշխատավոր գյուղացիության դաստիարակումը։

Հայաստանի Հեղափոխական կոմիտեի 1920 թ. նոյեմբերի 29-ին ընդունած դեկլարացիայում տրված էին ագրարային հարցի լուծման հիմնական սկզբունքները, իսկ 1920 թ. դեկտեմբերի 28-ի դեկրետում նշված էր, որ «մասնավոր հողերը դառնում են Հայաստանի սոցիալիստական հանրապետության սեփականությունը»[1]։ Այս երկու ակտերը դարձան Հայաստանի գյուղատնտեսության վերականգնման ու սոցիալիստական վերակառուցման հիմքերը։ Այսպիսով, սովետական իշխանության առաջին իսկ օրերից հայ աշխատավոր գյուղացին իր տնտեսությունը վարել է համաժողովրդական սեփականություն հանդիսացող հողի վրա, որը կարևոր նախադրյալ դարձավ հետագայում հողի հանրային օգտագործմանն անցնելու համար։

Հայաստանում սոցիալիստական շինարարությունը սկսվեց բարդ պայմաններում։ Դաշնակցականների արյունոտ տիրապետության տարիներից ժառանգություն մնացած տնտեսական քայքայվածությունն անմիջապես հնարավոր չէր վերացնել։ Քայքայված ժողովրդական տնտեսության, տասնյակ հազարավոր որբերի, գաղթականների, ինչպես նաև շարունակվող պարենային ճգնաժամի հետ միասին դեռևս լայն տարածում ունեին տարափոխիկ հիվանդությունները, որոնք մասսայաբար հնձում էին մարդկանց։

Սովետական Հայաստանի կառավարությունը դժվարությունները հաղթահարելու համար հարկադրված դիմեց հացի պաշարների մասնակի բռնագրավման։ Կուլակներից պարենային ռեսուրսները բռնագրավելու նպատակով գյուղերում կազմակերպվեցին չքավորական կոմիտեներ[2]։ Բացի այդ, ձեռնարկվեցին մի շարք այլ միջոցառումներ։ Սովետական Ռուսաստանի օրինակով կազմակերպվեց պարենավորման ժողովրդական կոմիսարիատ, որն օժտված էր հացի և այլ կենսամթերքների ձեռք բերման արտակարգ լիազորություններով։ Պարենային ապրանքների սակավության պատճառով սահմանվեց բաշխման քարտային սիստեմ, ժողովրդական տնտեսության որոշ բնագավառներում

---

1 «ՀՍԽՀ Դեկրետների և Հրամանների ժողովածու», պրակ 1, էջմիածին, 1921, էջ 31։

2 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 1, գ. 4, թ. 28։

աշխատանքը հարմարեցվեց ռազմական դրությանը, աղգայնացվեցին միջին ու նույնիսկ մանր ձեռնարկությունները, մտցվեց ընդհանուր և պարտադիր աշխատանքային պարհակ՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքով։ Միջոցառումների այդ ամբողջ սիստեմը, որը հայտնի է ռազմական կոմունիզմի քաղաքականություն անունով, Հայաստանում կենսագործվեց կես տարուց էլ պակաս ժամանակաշրջանում՝ սկսած 1920 թ. դեկտեմբերից։ Ավերված ու քայքայված, որբերով ու գաղթականներով հեղեղված Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը որոշ դժգոհություն առաջացրեց գյուղացիության մեջ, և մենք նույնպես համամիտ ենք Գ. Գեղամյանի հետ, որ «ռազմական առանձնահատկությունները ճիշտ հաշվի առնելու, ճկուն տնտեսական քաղաքականություն վարելու դեպքում հնարավոր էր Հայաստանում խուսափել «ռազմական կոմունիզմի» ոչ ցանկալի հետևանքներից[3]։

1921 թ. մարտին կուսակցության X համագումարն արմատական փոփոխություն մտցրեց տնտեսական քաղաքականության մեջ՝ ռազմական կոմունիզմը փոխարինելով նէպ-ով, որի էությունը բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի ամրապնդումն էր։ Առանց այդ դաշինքի հնարավոր չէր վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, կառուցել սոցիալիզմ։ Տնտեսական նոր քաղաքականությանն անցնելով՝ կուսակցությունն ամենից առաջ ելնում էր աշխատավոր գյուղացիության շահերից։

Նոր տնտեսական քաղաքականության խնդիրները կուսակցական կազմակերպություններից պահանջում էին ամրապնդել կապը մասսաների հետ, բարձրացնել նրանց ակտիվությունը։ Այս գործում նշանակալի դեր խաղացին անկուսակցական կոնֆերանսները՝ որպես աշխատավոր մասսաներին կուսակցության շուրջը համախմբելու կարևորագույն միջոցներ։ Վ. Ի. Լենինը հատուկ նշանակություն էր տալիս անկուսակցական կոնֆերանսներին, հատկապես գյուղացիության դաստիարակության խնդրում։ «Անկուսակցական կոնֆերանսներում,— գրել է նա,— մենք պետք է կարողանանք մոտենալ ոչ պրոլետարական միջավայրին, պետք է հաղթահարենք նախապաշարմունքները և մանրբուրժուական տատանումները. սա ամենաարմատական և հիմնական խնդիրներից մեկն է»[4]։

Անկուսակցական կոնֆերանսների միջոցով Հայաստանի գավառային կուսակցական կազմակերպությունները լայնորեն ուսումնասիրում էին գյուղացիների կարիքներն ու ցանկությունները, հաշվի էին առնում նրանց պահանջներն ու սրամադրությունները։ Այդ կոնֆերանսներում քննարկման էին դրվում գյուղացիությանը հուզող այնպիսի հարցեր, ինչպիսիք էին նոր տնտեսական քաղաքականությունը, հողաշինարարությունը, հարկերը, ժողովրդական կրթությունը և այլն։

Հայաստանի՝ որպես ագրարային երկրի համար, 1920-ական թվականներին վճռական նշանակություն ուներ հողային հարցի լուծումը։ Եվ այդ հարցը դրված է եղել գրեթե բոլոր անկուսակցական կոնֆերանսների օրակարգում. Այսպես, օրինակ, 1923 թ. փետրվարի 18-ին Մարտունու շրջանի անկուսակցական գյուղացիների կոնֆերանսն իր ընդունած որոշման մեջ ողջունում էր սովետական իշխանության հողային օրենքները, որոնք վերացնում էին անհավասար հողաբաշխումը, չքավորների շահագործումը հարուստների կողմից և կոչ էր անում ջանք չխնայել ցանքատարածությունը մեծացնելու, հողի մշակման եղանակները բարելավելու համար[5]։

Վերականգնման տարիներին ՀԿ(բ)Կ կարևոր խնդիրներից մեկը երիտասարդության ու կանանց համախմբելն ու նրանց շրջանում դաստիարակչական աշխատանք կատարելն էր։ Այդ նպատակով գումարվեցին անկուսակցական երիտասարդության, կանանց մի շարք կոնֆերանսներ։

---

3 Գ. Մ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին, Երևան, 1978, էջ 37։

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 441։

5 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 9, ց. 1, գ. 212, թ. 3։

Սովետական Հայաստանում ապրող այլազգիների համար ևս գումարվեցին անկուսակցական կոնֆերանսներ, որոնք կարևոր դեր խաղացին նրանց կուսակցության շուրջը համախմբելու գործում։ 1922 թ. մայիսի 25-ին կայացած Նոր Բայազետի գավառի «մուսուլմանների» անկուսակցական կոնֆերանսի որոշման մեջ գավառի ադրբեջանցի աշխատավորության զոհունակությունն էր արտահայտված այն առթիվ, որ «սովետական իշխանությունը ոչ մի տարբերություն չի դնում տարբեր ազգերի աշխատավորության միջև»[6]։

Սովետական Հայաստանում խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքները զուգադիպեցին կուսակցության կողմից նէպ-ին անցնելու մասին ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումները ՌՍՖՍՀ-ում կիրառելու առաջին քայլերին և հնարավորություն ստեղծվեց անմիջականորեն առաջնորդվելու Սովետական Ռուսաստանի օրինակով։ Դրա հետ միաժամանակ սիալ կլիներ չտեսնել Ռուսաստանի և Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանների միջև այն ժամանակ եղած տարբերությունները, որոնք մատնանշել է Վ. Ի. Լենինը։ «Ամենից ավելի կարևոր է,— գրել է նա 1921 թ. ապրիլի 14-ին «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված հայտնի նամակում,— որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[7]։

Վերոհիշյալ նամակում հանճարեղ առաջնորդը մեծ խորաթափանցությամբ շարադրել է կուսակցության տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում։ Նա առանձնապես շեշտում էր այն հանգամանքը, որ Անդրկովկասի հանրապետություններն ավելի գյուղացիական են, քան Ռուսաստանը, որի համար էլ այնտեղի կոմունիստները պետք է դրսևորեն «ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ»[8]։ Այնուհետև Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս տընտեսության վերականգնման աշխատանքները սկսել գյուղատնտեսությունից, ուստիմից։ «Իսկույն աշխատեցեք բարելավել գյուղացիների դրությունը,— նշում էր նա,— և սկսել էլեկտրիֆիկացման, ոռոգման խոշոր աշխատանքներ»[9]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու կառավարությունը, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և կուսակցության Կենտկոմի որոշումներով, առաջին հերթին սկսեցին վերականգնել գյուղատնտեսությունը, տվյալ ժամանակաշրջանի ամենահրատապ տնտեսական խնդիրը համարելով գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմամբ սովի դեմ պայքարելը և արդյունաբերության համար հումքային բազայի ստեղծումը։ Այդ նպատակով Հայաստանի Ժողկոմխորհը 1921 թ. հունվարի 27-ին և 31-ին դեկրետներ հրատարակեց կաթնամթերքի ու մսի, իսկ օգոստոսի 16-ին խաղողի և բրդի բնահարկի մասին։ Գյուղատնտեսական այլ մթերքների չափերը սահմանվեցին մինչև 1921 թ. աշունը։

Աշխատավոր գյուղացիությանը նոր հասարակարգի կառուցմանը մասնակից դարձնելու, գյուղը դեպի սոցիալիզմ տանելու գործում Վ. Ի. Լենինը կարևոր նշանակություն էր տալիս կոոպերացիային։ «Մեզանում կոոպերացիայի վրա նայում են արհամարհանքով,— գրել է նա,— չըմբռնելով, թե ինչ բացառիկ նշանակություն ունի այդ կոոպերացիան, նախ, սկզբունքային տեսակետից

6 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 463, թ. 6։
7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 43, էջ 237։
8 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 43, էջ 238։
9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 43, էջ 239։

(արտադրության միջոցների սեփականությունը պետության ձեռքում է), երկրորդ, ըստ կարելույն ավելի հասարակ, հեշտ ու գյուղացու համար մատչելի ճանապարհով նոր կարգերին անցնելու տեսակետից»[10]։ Հայաստանում գյուղացիական տնտեսությունների կոոպերացման հիմքը դրվեց 1921 թ. վերջերից։ Հանրապետությունում կոոպերատիվ շարժման ծավալման գործում խոշոր մոբիլիզացնող դեր կատարեց Հայաստանի կոմունիստական կուսակցության II համագումարը։ Կոոպերացիայի առթիվ ընդունված բանաձևում նշված է, որ «Անհրաժեշտ է լայնորեն կազմակերպել գյուղատնտեսական կոոպերացիան ինչպես արտադրական (գյուղատնտեսական արտելներ, ընկերություններ), նույնպես և սպառողական, որի համար անհրաժեշտ է գյուղատնտեսական վարկ»[11]։ 1924 թ. սեպտեմբերին կայացած գյուղատնտեսական կոոպերատիվների համագումարն ավարտեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպական ձևավորումը։ Ինչպես նշված է համագումարի որոշման մեջ, «Կոոպերացիան գյուղացիության դասակարգային կազմակերպություն է։ Գյուղի բարձր խավերը և վերջին տարիներում ուռճացած էլեմենտները տեղ չունեն կոոպերացիայում»[12]։

1924 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք ծավալեց չքավոր ու միջակ գյուղացիությանը կոոպերատիվների մեջ ընդգրկելու ուղղությամբ։ Կոոպերացիան, առաջին հերթին միավորելով չքավոր ու միջակ գյուղացիներին, ամրապնդում էր նրանց տնտեսությունը։ Գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ չքավոր և միջակ մասսաների ընդգրկման գործում զգալի դեր խաղացին գյուղական փոխադարձ օգնության կոմիտեներն ու ընկերությունները։ Հարկ է նշել, որ ՀԿ(բ)Կ-ն և հանրապետության կառավարությունը մեծ աշխատանք կատարեցին գյուղական փոխադարձ օգնության կոմիտեների ստեղծման ուղղությամբ։ Սովետական Հայաստանում այդպիսի կոմիտեներ սկսեցին կազմակերպվել 1922 թ. աշնանից և կարճ ժամանակամիջոցում լայն տարածում ստացան։ Այսպես, օրինակ, առաջին երկու տարիներին հանրապետությունում կազմակերպվեցին 1024 կոմիտեներ, որոնցից 8-ը գավառային էին, 38-ը՝ շրջանային, իսկ 971-ը՝ գյուղական[13]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում կոոպերացիայի պարզ, սկզբնական ձևերի զարգացումը զգալիորեն նպաստեց գյուղատնտեսության վերականգնմանը և պայմաններ նախապատրաստեց անցնելու արտադրական կոոպերատիվների, կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանը։ Արտադրական կոոպերացիայի զարգացման գործում կարևոր դեր խաղաց ՀամԿ(բ)Կ XIV համագումարը, որը երկրի ինդուստրացման կուրս վերցրեց։ Դա այն հիմնական միջոցն էր, որի օգնությամբ միայն հնարավոր կլիներ գյուղացիական մանր տնտեսությունները փոխադրել սոցիալիստական ամուր բազայի վրա։ Հայաստանում կոոպերատիվ շարժման գլխավոր խնդրի կատարման ուղղությամբ ՀԿ(բ)Կ-ին ու հանրապետության կառավարությանն անխոնջ օգնություն էր ցույց տալիս գյուղական ակտիվը։ Միաժամանակ ՀԿ(բ)Կ-ն աշխատանքներ էր տանում կոոպերատիվների կազմակերպչական թերությունները վերացնելու, դրանց ղեկավարությունը կոմունիստներով ամրապնդելու ուղղությամբ։

Մինչկոլտնտեսային ժամանակաշրջանում Հայաստանի կոմկուսը հսկայական աշխատանք կատարեց գյուղում կապիտալիստական հարաբերությունները սոցիալիստականով վերափոխելու ուղղությամբ։ ՀԿ(բ)Կ-ի կողմից ձեռնարկվող միջոցառումների սիստեմում քաղաքական խոշոր նշանակություն ու-

---

10 Վ. Ի. Լենին, նույն, հ. 45, էջ 437—438։

11 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 353—354։

12 Մշի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 4, գ. 131, թ. 4—5։

13 Նույն տեղում, ց. 2, գ. 383, թ. 1։

ներ գյուղի չքավորությանը օգնություն ցույց տալու խնդիրը։ Մինչև գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացմանն անցնելը ՀԿ(բ)Կ-ն դգալի աշխատանք կատարեց չքավոր գյուղացիության տնտեսական դրության բարելավման ուղղությամբ։ Այդ գործում վճռական նշանակություն ունեցավ նաև Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների օգնությունը Հայաստանին։ Բավական է նշել, որ մինչև 1924 թ. սովետական կառավարությունը Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար բաց է թողել 10 մլն ռ. վարկ[14], իսկ 1924—1929 թթ. ընթացքում Հայաստանի չքավոր գյուղացիությունը սովետական պետությունից ստացել է 7 մլն 48 հազար ռ. վարկ[15]։

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման առաջընթացի համեմատ ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում դասակարգային պայքարն ավելի ու ավելի էր սրվում։ Հայաստանի գյուղերում ևս կուլակները աշխուժանում էին։ ՀԿ(բ)Կ IV համագումարում, որը տեղի ունեցավ 1925 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը, նշվեց, որ Հայաստանում գոյություն ունի շերտավորում և որ կուլակը զգալի չափով ակտիվացել է[16]։

Սովետական իշխանությունն ամեն կերպ ձգտում էր սահմանափակել կուլակի աճման հնարավորությունները։ Կուլակության շահագործողական միտումները սահմանափակելու և չքավորների նյութական դրությունը բարելավելու կարևոր միջոցներից մեկը հարկային քաղաքականությունն էր, որի մեջ ցայտուն կերպով արտահայտվում էր դասակարգային գիծը։ Հարկելիս հիմնական ծանրությունը դրվում էր կուլակների և ունևոր գյուղացիների վրա, միևնույն ժամանակ չքավորության մեծ մասը ազատվում էր հարկից։ Այսպես, օրինակ, 1928—1929 տնտեսական տարում գյուղհարկից ազատվել էր հանրապետության գյուղացիության 46%-ը, նորմալ հարկադրված էր 52,4%-ը, անհատական կարգով հարկ էր տալիս 1,6%-ը[17]։ Հարկային քաղաքականությունը այն գլխավոր միջոցն էր, որի օգնությամբ ՀԿ(բ)Կ-ն կարողացավ է՛լ ավելի մերձենալ գյուղացիական հիմնական մասսաներին, բարձրացնել նրանց նյութական ու կուլտուրական մակարդակը և միևնույն ժամանակ ջլատել կուլակի տնտեսական հզորությունն ու քաղաքական ազդեցությունը։

Տնտեսական օգնության կազմակերպման հետ միասին Հայաստանի կոմկուսը կարևոր նշանակություն էր տալիս գյուղական չքավորության մեջ տարվող կուլտուր-դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը։ «Գյուղական չքավորության կազմակերպումը,— նշել է Վ. Ի. Լենինը,— մեր առջև կանգնած է իբրև մեր ներքին շինարարության ամենակարևոր հարց և նույնիսկ իբրև մեր ամբողջ հեղափոխության ամենագլխավոր հարց»[18]։ Հայաստանում գյուղական չքավորության մեջ աշխատանքներն ուժեղացնելու նպատակով 1925 թ. վերջերին սկսեցին կազմակերպվել չքավորական խմբակներ, որոնք ակտիվորեն մասնակցում էին սոցիալիստական շինարարությանը, օգնում էին գյուղի կուսակցական և սովետական կազմակերպություններին, արձագանքում տնտեսական ու քաղաքական կյանքի հրատապ հարցերին։ Չքավորական խմբակները դարձան ՀԿ(բ)Կ գյուղական կազմակերպությունների կարևոր լրացուցիչներից մեկը՝ գյուղի սոցիալիստական վերափոխման համար պայքարում։

Այդ խմբակները ունեին իրենց կանոնադրությունը և գործում էին տեղական կուսակցական կազմակերպությունների ղեկավարության ներքո։ Չքավորական խմբակներ ամենից առաջ կազմավորվում էին այն վայրերում, որտեղ դասակարգային պայքարն ավելի սրված էր և կային կոմբջիջներ, որոնք կարող էին իրականացնել կոմունիստական կուսակցության ղեկավար դերը։ Գյու-

---

14 Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1970, էջ 170։

15 «Գյուղի կոմունիստ», 1929, № 8, էջ 18։

16 ՄԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 5, գ. 5, թ. 11։

17 Գ. Մ. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 144։

18 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 212։

ղի կյանքին վերաբերող կարևորագույն խնդիրները մինչև մասսայական քննարկման դնելը կուսակցական կազմակերպությունները դրանք նախապատրաստում էին չքավորական խմբակներում՝ բատրակների, միջակ գյուղացիների, ակտիվ կոմերիտականների մասնակցությամբ։ Այդ խնդիրների շուրջը, այդպիսով, ստեղծվում էր հասարակական կարծիք, որը վճռական նշանակություն էր ունենում դրանց հետագա կենսագործման համար։

1926 թ. վերջերին Հայաստանում կազմակերպվում են 87 գյուղական չքավորական խմբակներ[19], գլխավորապես գյուղսովետներին կից։ 1927 թ. գյուղսովետների ընտրության ժամանակ հանրապետության գրեթե բոլոր գյուղսովետներին կից արդեն չքավորական խմբակներ էին գործում։ Դրանց թիվը հետո ավելի է աճում։ Աճում էր նաև չքավորների ակտիվությունը[20]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1928 թ. փետրվարին քննարկեց չքավորության մեջ տարվող աշխատանքի հարցը և ՀԿ(բ)Կ գավառային ու շրջանային կազմակերպությունների առջև խնդիր դրեց արմատապես բարելավել չքավորության մեջ տարվող քաղաքական աշխատանքը[21]։

Հանրապետության կուսակցական կազմակերպությունները լուրջ աշխատանք էին կատարում բատրակներին ու չքավորներին կուսակցության, կոմերիտմիության շարքերն ընդունելու ուղղությամբ։ Եթե 1926 թ. կուսակցության շարքերն էր ընդունվել 22 բատրակ[22], ապա 1929 թ. ինը ամիսների ընթացքում՝ 297 բատրակ, որը կազմում էր կուսակցության մեջ նույն ժամանակ բոլոր ընդունվածների 33,6%-ը[23]։

Գյուղական չքավորության շրջանում ՀԿ(բ)Կ աշխատանքը վճռական նշանակություն ունեցավ գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացումը նախապատրաստելու գործում։ Դրա վառ վկայությունն է այն, որ 1928 թ. հանրապետության կոլտնտեսությունների մեջ ընդգրկված 1082 գյուղացիական տնտեսությունների 81,4%-ը բատրակային ու չքավոր տնտեսություններ էին[24]։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացմանը նախորդող տարիներին աշխատավոր գյուղացիությանը նշանակալի օգնություն ցույց տվեց Հայաստանի բանվոր դասակարգը։ Այդ երկու դասակարգերի փոխհարաբերությունների մեջ ի հայտ եկավ նոր ձև՝ պրոլետարական շեֆությունը գյուղի նկատմամբ։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունները պրոլետարական շեֆության հարցերով ավելի մոտիկից սկսեցին զբաղվել 1926 թ.։ Շեֆական աշխատանքները գյուղում քաղաքական լայն բնույթ ընդունեցին 1929 թ. սկսած։ Կուսակցության նախաձեռնությամբ արդյունաբերական ձեռնարկությունները գյուղ էին ուղարկում բանվորական բրիգադներ, որոնք զգալի դեր էին խաղում չքավոր և միջակ գյուղացիությանը պրոլետարիատի դիկտատուրայի շուրջը համախմբելու, ինչպես նաև կուսակցության քաղաքականությունը գյուղացիության շրջանում պարզաբանելու գործում։ Բանվորները դառնում էին աշխատավոր գյուղացիության՝ կուլակության դեմ մղվող պայքարի անմիջական կազմակերպիչները և դրանով ևս ավելի ամրապնդում չքավորների ու միջակների դիրքերը գյուղում։ Այս ամենի շնորհիվ վերականգնվեցին գյուղացիական քայքայված տնտեսությունները, ընդարձակվեցին ցանքատարածությունները, ավելացավ հացահատիկային կուլտուրաների բեր-

---

19 Ե. Հովհաննիսյան, Չքավորական խմբակների գործունեությունը Հայաստանում 1925—1932 թթ., Երևան, 1961, էջ 32։

20 «Նյութեր ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հաշվետվության (1925—1927) ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարին», Երևան, 1928, էջ 167։

21 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 12, գ. 132, թ. 14։

22 «Խորհրդային Հայաստան», 7. XI. 1928։

23 Նույն տեղում, 14. VIII. 1929։

24 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր. 1926—27 և 1927—28 թթ.», Երևան, 1929, էջ 68։

քատվությունը, բարելավվեց գյուղացիների նյութական դրությունը։ 1925—1927 թթ. հանրապետության գյուղատնտեսությունը դգալի վերելք ապրեց։ Արդեն 1927 թ. նրա ընդհանուր ցանքատարածությունները գերազանցեցին նախապատերազմյան մակարդակը[25]։ Սովետական Հայաստանի տնտեսության վերականգնման աշխատանքները ավարտվեցին 1927—1928 թթ., որը մեծ նշանակություն էր, սակայն մանր անհատական տնտեսությունների պայմաններում անհնարին էր աղքատության լրիվ վերացումը։

1927 թ. նոյեմբերին կայացած ՀԿ(բ)Կ V համագումարն ամփոփեց ժողովրդական տնտեսության բնագավառում ձեռք բերված նվաճումները և նշեց հանրապետության կուսակցական կազմակերպությունների հերթական խնդիրները։ Համագումարը նրանց ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ «արդեն ժամանակն է, որպեսզի գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկի նաև արտադրական պրոցեսները»[26]։

Մանրապրանքային գյուղացիական տնտեսությունների պահպանումը դարձել էր անհանդուրժելի։ Դրանց պահպանումը հավասարաչափ էր գյուղում կապիտալիզմի հետագա պահպանմանը։ Սովետական իշխանությունն այլևս չէր կարող հենվել իրարամերժ երկու տնտեսական հյուղերի վրա։ Բացի այդ, կուլակներն աստիճանաբար ուժեղացնում էին դիմադրությունը սոցիալիստական ձեռնարկումներին, ձախողում էին հացահատիկի մթերումները, բերքահավաքի աշխատանքները և այլն։ Ուրեմն, ժամանակն էր, որպեսզի հուսալի պատնեշ կանգնեցվեր օրեցօր ակտիվացող գյուղական բուրժուազիայի առջև։ Կուլակային տնտեսությանը հակադրվող այդ պատնեշը կարող էր լինել միայն սոցիալիստական կոլեկտիվ խոշոր տնտեսությունը։

Գյուղի սոցիալիստական վերափոխման համար արդեն մի շարք նախադրյալներ առկա էին։ Ամրապնդվել էր պրոլետարիատի դիկտատուրան, ավելի սերտ էր դարձել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը։ Երկրի ինդուստրացումը պայմաններ էր ստեղծում գյուղը մեքենաներով ու գործիքներով ապահովելու համար։ Գյուղկոոպերացիայի պարզագույն ձևերն արդեն որոշակի զարգացում էին ապրել։ Սրանք կարևոր նախադրյալներ էին, որոնք առաջին ճեղքն էին բացել գյուղացու մասնավոր սեփականատիրական հոգեբանության մեջ։

ՀամԿ(բ)Կ XV համագումարը, որը տեղի ունեցավ 1927 թ. դեկտեմբերին, պատմական նշանակություն ունեցող որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման վերաբերյալ։ Համագումարը, բազմակողմանիորեն քննարկելով գյուղատնտեսության հետ մնալու հարցը, գտավ, որ այն դառնում է սոցիալիստական շինարարության հետագա զարգացման արգելակ։ Ելնելով դրանից, համագումարը կուսակցության հիմնական խնդիրը համարեց գյուղատնտեսության կոլեկտիվացման ծավալումը։ «Ներկա ժամանակաշրջանում մանր անհատական գյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվների մեջ միավորելու և վերափոխելու խնդիրը պետք է դրվի որպես կուսակցության հիմնական խնդիր գյուղում»[27],— նշված է համագումարի ընդունած բանաձևում։

Մեր հանրապետությունում գյուղատնտեսության կոլեկտիվացումը հիմնականում սկսվեց ՀամԿ(բ)Կ XV և ՀԿ(բ)Կ V համագումարների որոշումների հիման վրա։ Երկրում սոցիալիստական շինարարության ծավալումը առաջ բերեց կապիտալիստական տարրերի համառ դիմադրություն։ Դասակարգային պայքարը մեծ սրության հասավ հատկապես այն ժամանակ, երբ սովետական պետությունն ուժեղացրեց հարձակումը կուլակության դեմ։ Կուլակության ամենաուժեղ դիմադրությունն ի հայտ էր գալիս հատկապես ձայնազրկումների ժամանակ։ Կուլակները չէին խուսափում սովետական իշխանության դեմ

25 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 9, գ. 9, թ. 6։

26 «ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարի բանաձևերը», Երևան, 1928, էջ 12։

27 «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 601։

պայքարի և ոչ մի ձևից։ Մի շարք գյուղերում, օրինակ, կուլակները տարածում էին հետևյալ լոզունգը՝ «ոչ մի չքավոր, ոչ մի կոմունիստ չպետք է ընտրել սովետում, մեզ հարկավոր է մեր իշխանությունը»[28]։ Մի շարք վայրերում էլ նրանք նախապատրաստական աշխատանք էին տանում իրենց թեկնածությունների շուրջը, կազմակերպում էին խնջույքներ և հրավիրում գյուղացիների մեծ մասին, այդ թվում բատրակներին։ Ելենովկայի կրոնական աղանդի ղեկավարները, իմանալով, որ իրենց ձայնազուրկ են արել, կարգադրում են տերտերներին թույլ չտալ ննջեցյալներին թաղել մինչև նրանց տերերը չբողոքեն ձայնազրկման դեմ և չվերականգնեն այն[29]։ Այս և բազմաթիվ այլ փաստեր ցույց են տալիս կուլակների կողմից պայքարի տարբեր մեթոդների դիմելը։

Դասակարգային պայքարի սրումն արտահայտվեց նաև կուսակցության մեջ, երբ կուսակցության գծի դեմ հանդես եկավ աջ կապիտուլյանտների խումբը։ Նրանք ակտիվացան 1928 թ., երբ կուլակների դեմ կիրառվեցին արտակարգ միջոցներ։ Աջերը պահանջում էին վերացնել արտակարգ միջոցները, հանդես էին գալիս սոցիալիզմի ծավալուն հարձակման և կապիտալիստական տարրերի վերացման դեմ, չէին ընդունում գյուղը դեպի սոցիալիզմ տանող միակ ուղին՝ կոլեկտիվացումը, հրաժարվում էին առևտրի կարգավորման քաղաքականությունից և պահանջում էին առևտրի ազատություն։

Հայաստանում աջ տարրերը ժխտում էին կուլակների դոյությունը և գրտնում, որ Հայաստանի գյուղերում դասակարգային պայքար գոյություն չունի։ Իրականում կուլակությունը ոչ միայն դիմում էր տեռորի, այլև որոշ տեղերում նրան հաջողվել էր թափանցել սովետները, կոոպերատիվները, անդամ կուսակցության շարքերը։ Աջ թեքումը Հայաստանի կոմունիստական կուսակցության կողմից դատապարտվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. ապրիլյան, հուլիսյան և նոյեմբերյան պլենումներում։ Աջ թեքման դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմն ուսումնասիրեց որոշ գավառների կուսկազմակերպությունների սոցիալական կազմը՝ մշակելով մի շարք պրակտիկ միջոցառումներ։ Աջ թեքման դեմ պայքարի նշանաբանով անցան գավառային կուսկազմակերպությունների կոնֆերանսները։ Այսպես, օրինակ, ՀԿ(բ)Կ Նոր Բայազետի գավառային կուսկազմակերպության 1928 թ. դեկտեմբերին տեղի ունեցած 10-րդ կոնֆերանսը, որին մասնակցում էր և զեկուցումով հանդես եկավ այն ժամանակ ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար Ա. Խանջյանը, ընդունեց համապատասխան բանաձև. Այնտեղ մասնավորապես նշված է, որ «աջ վտանգի համար, մանավանդ, մեզ մոտ, Հայաստանի պայմաններում ավելի պարարտ հող կա։ Այդ պատճառով աջ վտանգի դեմ պետք է տանել ավելի ուժեղ թափով պայքար»[30]։

Գյուղական կուսակցական կազմակերպությունների մարտունակության բարձրացման գործում կարևոր փուլ հանդիսացավ կուսակցության շարքերի զտումը, որն անցկացվեց ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսի որոշմամբ։ Կուսշարքերի զտումը հսկայական աշխուժություն առաջ բերեց կուսակցական և անկուսակցական աշխատավոր մասսաների մեջ։ Հայաստանում կուսակցական զտումը սկսվեց և ավարտվեց 1929 թ.։ Կուսակցության շարքերից հեռացվեց նրա ընդհանուր կազմի 13,2%-ը[31]։

Գյուղի կուսակցական կազմակերպությունների առջև դրված խնդիրները չէր կարելի լուծել միայն կուսշարքերի զտման միջոցով։ Գյուղում կուսակցության քաղաքականության անշեղ կենսագործման համար մեծ նշանակություն ուներ կոմունիստների գաղափարական ու քաղաքական մակարդակի բարձրացումը։ Յուրաքանչյուր կոմունիստ պետք է ոչ միայն ըմբռներ գյուղում կատարվող սոցիալ-քաղաքական տեղաշարժերի իմաստը, այլև ակտիվորեն մասնակ-

28 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 7, գ. 210, թ. 43։

29 Նույն տեղում, թ. 46։

30 Նույն տեղում, ֆ. 9, ց. 1, գ. 816, թ. 1, 13։

31 Նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 1, թ. 101։

ցեր սոցիալիզմի հիմքերի կառուցմանը, կարողանար կուսակցության քաղաքականությունը բացատրել անկուսակցական մասսաներին, համոզել այդ քաղաքականության ճշտությունը և նրանց տանել իր ետևից։ Այդ նպատակով ՀԿ(բ)Կ-ն ձեռնարկեց մի շարք միջոցառումներ։

1929 թ. կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ երկիրը սոցիալիստական շինարարության բնագավառում հասավ ակնառու նվաճումների։ Դրանում կարևոր դեր խաղաց կուսակցության շարքերի հետագա ամրապնդումը։ Կուսակցության կազմը լրացվեց աշխատավորական լավագույն ներկայացուցիչներից։ Հայաստանում, օրինակ, 1929 թ. հունվարի 1-ի համեմատությամբ, 1930 թ. հունվարի 1-ին ՀԿ(բ)Կ անդամների թիվն ավելացավ 2215-ով, իսկ աշխատավորական խավերի տեսակարար կշիռը կուսակցության մեջ նույն ժամանակ 42,5-ից հասավ 51,5%-ի[32]։

1929 թ. հունվարին կայացած ՀԿ(բ)Կ VI համագումարը, քննարկելով «Կուսակցության հերթական անելիքները գյուղում» հարցը, գյուղական կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց կոլտնտեսությունների սոցիալական կազմի վրա և անհրաժեշտ համարեց ձեռնարկելու համապատասխան միջոցներ՝ գյուղի կենտրոնական դեմքը համարվող միջակ գյուղացիությանը ևս կոլտնտեսությունների մեջ ներգրավելու, գյուղական կուսակցական կազմակերպություններն ավելի ևս ուժեղացնելու, կոլտնտեսություններում կուսակցականների ղեկավար դերը բարձրացնելու համար[33]։ Գյուղական կուսակցական կազմակերպությունների մարտունակության բարձրացմամբ էլ պայմանավորվեց գյուղում տարվող տնտեսական, քաղաքական, կուլտուրական աշխատանքի հաջողությունը։ 1929 թ. դարձավ բեկման տարի, սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ակնառու նվաճումների տարի։ Գյուղատնտեսության բնագավառում ամենամեծ նվաճումն այն էր, որ կուսակցության անխոնջ աշխատանքի շնորհիվ գյուղական հիմնական մասսաները շրջվեցին դեպի կոլտնտեսությունները, և 1929 թ. աշնանից երկրում ծավալվեց համատարած կոլեկտիվացումը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը քննարկեց հանրապետության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցերը։

Հանրապետության հողժողկոմ Ա. Երզնկյանը պլենումում հանդես եկավ «Հայաստանի գյուղատնտեսության զարգացումն ու սոցիալիստական վերակառուցումը» զեկուցումով։ Նա նշեց, որ Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանն առաջին հերթին բնորոշվում է սոցիալիստական կացութաձևի նվաճումներով։ Դրա ապացույցը այն է, որ «6300 գյուղացիական տնտեսություններ 19000 հեկտար հողով արդեն ընդգրկված են կոլտնտեսությունների մեջ։ Հնգամյակով նախատեսված թափից ավելի արագ է զարգանում սովխոզների շինարարությունը, որն արդեն ընդգրկում է 27.000 հեկտար տարածություն»[34]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը հանրապետությունում հողաշինարարության աշխատանքների վիճակը քննության առնելիս նշեց, որ Հայաստանում հողահավասարեցման և միջգյուղյա հողաշինարարական աշխատանքներն ավարտված են և որ այդ ասպարեզում Հայաստանի կոմկուսը և կառավարությունը հսկայական դժվարություններ են հաղթահարել[35]։

«Կոլտնտեսային շինարարության հերթական խնդիրները» հարցի վերաբերյալ պլենումի ընդունած բանաձևում նշվեցին կոլտնտեսային շարժման հաջողությունները, գլխավորապես այն, որ այդ շարժումը դառնում է չքավոր ու միջակ գյուղացիության մասսայական շարժում։ Կոլտնտեսային շարժման

---

32 Նույն տեղում, ց. 13, գ. 272, թ. 8, 9։

33 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութերը ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարին», Երևան 1929, էջ 57։

34 «Խորհրդային Հայաստան», 20. XI. 1929։

35 Նույն տեղում։

գլխավոր ձև դարձյալ հաստատվեց գյուղատնտեսական արտելը, իսկ կոլտնտեսային շինարարության հիմնական խնդիրը՝ խոշոր տնտեսությունների կառուցումը, ամբողջ գյուղերի ու շրջանների կոլեկտիվացումը[36]։

Պլենումը գյուղատնտեսական կադրերի պատրաստման աշխատանքները բարելավելու նպատակով առաջարկեց շտապ կարգով վերանայել ու վերամշակել գյուղատնտեսական կրթության ամբողջ համակարգը[37]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի որոշումները քննարկվեցին հանրապետության բոլոր կուսակցական կազմակերպություններում, լուսաբանվեցին մամուլում և աշխատանքային նոր խթան հանդիսացան։

Կոլտնտեսային շինարարության գործում չափից ավելի շտապողականություն ցուցաբերելու ձգտումը, սակայն, անհարկի շեղումների ու սխալների տեղիք տվեց և որոշ չափով բացասաբար ազդեց գյուղի սոցիալիստական շինարարության վրա։

Հայկական ՍՍՀ-ում կոլտնտեսային շարժումը լայնորեն ծավալվեց 1930—1932 թթ.։ Եթե 1929 թ. հոկտեմբերին հանրապետությունում 6390 միավորված տնտեսություններով 245 կոլտնտեսություններ էին ստեղծված, որոնց մեջ ընդգրկված էր ամբողջ գյուղացիական տնտեսությունների 2,4%-ը[38], ապա 1932 թ. հուլիսի 1-ի տվյալներով հանրապետությունում կոլտնտեսությունների քանակը հասավ 892-ի, որոնց մեջ ընդգրկված էր գյուղացիության 37,3%-ը[39]։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի հայտնի որոշմամբ Հայաստանում համատարած կոլեկտիվացման ավարտման հիմնական ժամկետ սահմանվեց առաջին հնգամյակի վերջը։ 1933 թ. հանրապետությունում կոլտնտեսությունների թիվը հասավ 900-ի[40]։

Համատարած կոլեկտիվացման հիման վրա հնարավոր եղավ կուլակության սահմանափակումից անցնել նրա վերացմանը՝ որպես դասակարգի։ Այդ քաղաքականության էությունն այն էր, որ կուլակությունը վերջնականապես զրկվում էր իր գոյության ու զարգացման աղբյուրներից՝ արտադրության գործիքներից, հողի ազատ օգտագործման ու վարձակալման, ինչպես և բանվորական ուժ վարձակալելու իրավունքներից։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում համատարած կոլեկտիվացումը տեղի էր ունենում կուլակության կատաղի դիմադրության պայմաններում։ Գյուղացիները կուլակներից խլում էին նրանց անասունները, մեքենաները, հողը և մյուս միջոցներն ու դրանք դարձնում կոլտնտեսության սեփականություն։

Հնգամյակի տարիներին հանրապետության գյուղատնտեսության մեջ ներդրվեց 96,6 մլն ռ., որից կոլտնտեսային շինարարությանը հատկացվեց 13,6 մլն ռ.։ Ընդարձակվեց ոռոգման ցանցը, ավելացան ջրովի հողատարածությունները։ Խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության մեքենայացման բնագավառում. հնգամյակի վերջում հանրապետությունում կար 366 տրակտոր, և գյուղատնտեսության մեքենայացման հնգամյա պլանը փաստորեն կատարվել էր կրկնակի չափով[41]։

ՀԿ(բ)Կ ղեկավարությամբ Հայաստանի գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը հասարակական-տնտեսական զարգացման երկարատև ու բարդ պրոցես էր, իսկական հեղափոխություն հանրապետության գյուղատնտեսության մեջ։ Գյուղի սոցիալիստական վերափոխմամբ արմատապես փոխվեց հայ գյուղացու կերպարը, սոցիալիզմի կառուցման տարիներին նա դարձավ նոր կյանքի ակտիվ կերտողը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման շր-

36 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 13, գ. 18, թ. 114—115։

37 Նույն տեղում, թ. 71—72։

38 Նույն տեղում, գ. 20, թ. 92։

39 «Խորհրդային Հայաստան», 12. VII. 1932։

40 «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 115։

41 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 446։

Նորհիվ Հայաստանի գյուղատնտեսությունը վերածվեց խոշոր մեքենայացված ապրանքային տնտեսության։ Հայ աշխատավոր գյուղացիությունը դարձավ արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականության տեր դասակարգ։

Այսպիսով, կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքով Հայաստանի կոմկուսին հաջողվեց հանրապետությունում իրականացնել գյուղատնտեսության կոոպերացման լենինյան հանճարեղ պլանը և լուծել սոցիալիստական հեղափոխության դժվարագույն պատմական խնդիրներից մեկը՝ հայ աշխատավոր գյուղացիությանը փոխադրել հանրային, սոցիալիստական ուղի։

КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ—ОРГАНИЗАТОР СОЦИАЛИСТИЧЕСКИХ ПРЕОБРАЗОВАНИЙ НА СЕЛЕ (1920—1933)

НОРИК МУШЕГЯН

Резюме

Советская Армения получила в наследство отсталое и разрушенное сельское хозяйство. Перед армянским народом, Коммунистической партией Армении встали труднейшие задачи построения социализма. Руководствуясь указаниями В. И. Ленина и решениями ЦК партии, Компартия Армении в первую очередь приступила к восстановлению сельского хозяйства. С целью преобразования социалистического сельского хозяйства развернулась большая работа по вовлечению в кооперативы бедняков и середняков, по улучшению экономического положения бедняков.

1929-1933 гг. стали переломными в развитии всех отраслей народного хозяйства. Началась массовая коллективизация, что позволило от политики ограничения кулачества перейти к его ликвидации как класса. Социалистическая перестройка сельского хозяйства в республике была осуществлена благодаря укреплению рядов Коммунистической партии Армении, ее упорной организаторской, воспитательской работе.